



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Օ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/32994-2019**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-187-14.06.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-187-14.06.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված նյութական հանցակազմը դարձնել ձևական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 226.1-ին հոդվածով, ինչի արդյունքում կքրեականացվեն բռնություն գործադրելու հրապարակային կոչերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝

1) Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործությունն ավարտված կհամարվի ոչ թե մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին փաստացի վնաս պատճառելու, այլ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները՝ նորմի դիսպոզիցիայում նշված որևէ հատկանիշից կախված, խախտելու պահից: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ քննարկվող հանցակազմը ձևական դարձնելու դեպքում արհեստականորեն իջեցվում է արարքի քրեականացման շեմը, ինչը հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքների լայն շրջանակի առկայության պայմաններում կարող է հանգեցնել քրեաիրավական նորմի ծայրահեղ մեկնաբանման ու, ըստ էության, ցածր հանրային վտանգավորություն ունեցող արարքների քրեաիրավական որակման: Օրինակ՝ արարքը կարող է որակվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասով, եթե ղեկավարը հանձնարարի իգական սեռի աշխատողներին նստել առավել հարմարավետ աշխատասենյակում, քան արական սեռի աշխատողներին: Կամ որևէ անձ, ով մերժում է ամուսնության առաջարկը՝ կախված առաջարկ անողի՝ 143-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված հատկանիշներից որևէ մեկին համապատասխանելու հետ, նույնպես, ըստ նախագծի, ընկնում է խնդրո առարկա հանցակազմի գործողության տակ և ենթակա է քրեական պատասխանատվության: Օրինակները բազմաթիվ են և վկայում են այն մասին, որ հավասարության խախտման ոչ բոլոր դեպքերն են ենթակա քրեականացման, այլ միայն նրանք, որոնք էական վնաս են պատճառել անձի՝ օրենքով պաշտպանվող իրավունքներին և շահերին՝ առաջացնելով իրական բացասական հետևանք հանցավոր ոտնձգության օբյեկտի համար: Ուստի, վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպումների համակարգային միասնությունն ապահովելու նպատակով, առաջարկում ենք քննարկվող հոդվածի 1-ին մասում «որը վնաս է պատճառել» բառերը փոխարինել «որը էական վնաս է պատճառել»:

բառերով՝ այդպիսով հանցագործությունն ավարտված համարել այն ժամանակ, երբ օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությանն արարքով էական վնաս է պատճառվել: Միաժամանակ առաջարկում ենք իրավահավասարության քրեաիրավական պաշտպանության հարցին առավել համակարգային դիրքերից անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներն իրականացնելիս, որոնք արդեն մեկնարկել են, քանի որ չենք ժխտում, որ նորմը, ընդհանուր առմամբ, թերի է ձևակերպված:

2) Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից սույն թվականի հունիսի 3-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Կ-042-06.03.2019-ՊԻ-011/1), որով քրեականացվող արարքը՝ այն է ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության հրապարակային կոչերը, նշված հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 226.1-ին հոդվածում: Հատկանշական է այն հանգամանքը, որ հիշատակված նախագծով նշված արարքներն ինքնին չեն քրեականացվում, այլ քրեական պատասխանատվությունը վրա է հասնելու բացառապես այն դեպքում, երբ այդպիսիք առաջացնեն նշված հանցանքները կատարելու իրական վտանգ: Նման կարգավորումը նպատակաուղղված է բացառելու խոսքի ազատության անհարկի և անհամաչափ սահմանափակումները, ինչպես նաև կանխելու ավելորդ քրեականացումը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծով առաջարկվող փոփոխությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում առկա լուծումները: Բացի այդ, անհրաժեշտ է վերանայել նախագծով առաջարկվող հոդվածի համարակալումը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 6-ի բռնության կոչերի համար պատասխանատվություն նախատեսելու հարցի ուսումնասիրության հանձնարարականը, գտնում ենք, որ իրավահավասարության ապահովման անկյունաքարային նպատակի իրականացման համատեքստում անհրաժեշտություն է առաջացել մանրամասն քննարկելու ոչ միայն բռնության կոչերի, այլև ատելության խոսքի համար պատասխանատվություն նախատեսելու ավելի համակարգային մոտեցումը, որը բազմիցս ընդգծվել է նաև քաղաքացիական հասարակության հետ մեր քննարկումներում: Այդ նպատակով, գտնում ենք, որ ավելի նպատակահարմար է տվյալ նախագծի քննարկումը հետաձգել մինչև ատելության խոսքի համար պատասխանատվություն նախատեսելու հարցի համակողմանի ուսումնասիրությունը:



16 հուլիսի 2019 թվականի N 928 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանն նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-187-14.06.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 16  
Երևան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 143-րդ հոդվածի առաջին մասից հանել «,որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 226.1-ին հոդվածով.

«Հոդված 226.1. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը

Անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի չորրորդ մասով, 226-րդ, 301-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու համար: Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեորեն պատժելի է համարվում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին:

Ինչպես երևում է հոդվածի դիսպոզիցիայի ձևակերպումից, տվյալ հանցակազմը նյութական է, և հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում հանրորեն վտանգավոր հետևանքը՝ մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին պատճառված վնասը: Սակայն քննարկվող նորմի համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ուղղակի կամ անուղղակի ցանկացած խախտում **միշտ** հանգեցնում է նրա իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառելուն:

Այլ կերպ ասած՝ գործնականորեն հնարավոր չէ պատկերացնել այնպիսի դեպք, երբ անձը քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածում նշված հատկանիշների հիման վրա ուղղակի կամ անուղղակի խախտի մարդու իրավունքներն ու ազատությունները, և այդ մարդու իրավունքներին ու օրինական շահերին վնաս չպատճառվի: Հարկ է նշել, որ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածում որպես հանրորեն վտանգավոր հետևանք նշված է մարդու իրավունքներին և օրինական շահերին պատճառված **ցանկացած** վնասը՝ առանց շեշտադրելու այդ վնասի էական կամ խոշոր լինելու փաստը: Քրեական

օրենսգրքի 143-րդ հոդվածը ամրագրված է «Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները», իսկ սահմանադրական իրավունքի ցանկացած խախտում անխուսափելիորեն վնաս է պատճառում մարդու իրավունքներին ու օրինական շահերին:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ գործող օրենսդրական կարգավորման պարագայում քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի առաջին մասում հանրորեն վտանգավոր հետևանքի մասին նշումն ավելորդ է, և այդ հոդվածով նախատեսված նյութական հանցակազմը անհրաժեշտ է վերափոխել ձևական հանցակազմի:

Գործող քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանված հրապարակային կոչեր անելու մի շարք դեպքերի համար, ինչպիսիք են՝ զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին ակտիվորեն չենթարկվելու կամ անձանց նկատմամբ բռնություն կիրառելու կոչերը (225-րդ հոդվածի 4-րդ մաս), իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը (301-րդ հոդված), ագրեսիվ պատերազմ սանձազերծելու հրապարակային կոչերը (385-ր հոդվածի 1-ին մաս):

Սակայն վերոնշյալ հանցակազմերն առանձին դեպքերում իրենց մեջ չեն ներառում այն իրավիճակները, երբ արվում են անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչեր: Մասնավորապես, եթե բռնություն գործադրելու կոչերը չեն արվում զանգվածային անկարգությունների ժամանակ, ուղղված չեն իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ագրեսիվ պատերազմ սանձազերծելուն կամ ազգային, կրոնական կամ ռասայական թշնամանք հարուցելուն, ապա ըստ գործող օրենսդրության դրանք չեն համարվում հանցագործություն:

Սակայն անկախ բռնության կոչերի հնչեցման իրադրությունից և դրանց ուղղվածությունից, դրանք բնութագրվում են հանրային վտանգավորության այնպիսի աստիճանով, որը բավարար է քրեականացման համար: Այսպես, անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը հոգեբանական ներգործություն են ունենում անձանց անորոշ շրջանակի վրա, և կարող են ձևավորել բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարելու մոտիվացիա: Դրանց արյդունքում

հասարակության անդամների մոտ կարող է ձևավորվել այն վտանգավոր համոզմունքը, որ բռնությունը հանդիսանում է սեփական պահանջմունքները բավարարելու և խնդիրները լուծելու ընդունելի և արդարացված միջոց: Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը նպաստավոր պայմաններ են ստեղծում բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարելու համար, հետևաբար՝ իրական վտանգ են առաջացնում անձանց անորոշ շրջանակի պաշտպանվածության համար, ինչով էլ ոտնձգում են հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ հասարակական անվտանգության առավել լիարժեք և ամբողջական քրեաիրավական պաշտպանվածությունն ապահովելու, հասարակության շրջանում բռնության մթնոլորտը կանխարգելելու և բռնության կոչերին համարժեք պետական արձագանք դրսևորելու նպատակով անհրաժեշտ է քրեական պատասխանատվություն սահմանել անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի չորրորդ մասով, 226-րդ, 301-րդ կամ 385-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները:

### **Առաջարկվող կարգավորման բնույթը**

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի առաջին մասից հանել «,որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին» բառերը, ինչի արդյունքում տվյալ հոդվածով նախատեսված հանցակազմը կբնութագրվի որպես ձևական հանցակազմ:

Նախագծով առաջարկվում է նաև քրեական պատասխանատվություն սահմանել բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար՝ քրեական օրենսգրքի լրացնելով հետևյալ բովանդակությամբ 226.1-ին հոդվածով.

«Հոդված 226.1. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը

Անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի չորրորդ մասով, 226-րդ, 301-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Նախատեսվում է քրեականացնել ոչ թե ցանկացած տեսակի բռնության, այլ՝ միայն կյանքի կամ առողջության համար **վտանգավոր** բռնության կոչերը, քանի որ այդպիսի կոչերի հանրային վտանգավորությունն է համապատասխանում քրեականացման համար անհրաժեշտ մակարդակին:

Բռնության կոչերի քրեականացումը թույլատրելի է, քանի որ այն չի հակասում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին ու ՀՀ Սահմանադրությանը:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ **բռնության հրահրում**, արգելվում է օրենքով»:

Ի տարբերություն սեփական կարծիքը և գաղափարները արտահայտելու իրավունքի իրացման՝ բռնություն գործադրելու կոչերը բնութագրվում են նպատակաուղղվածությամբ, մարդկանց կամքի, գիտակցության և վարքագծի վրա ակտիվ ներգործությամբ, որոշակի մտքերի և գաղափարների պարտադրմամբ՝ նշելով, թե ինչ պետք է անել և ինչպես պետք է անել: ՀՀ Սահմանադրական դատարանը 14.10.2008 ՍԴՈ-766 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բռնության կոչերը անհամատեղելի են խոսքի ազատության իրավունքի հետ:

Քրեականացվող արարքի հատկանիշների օրենսդրական նկարագրությունը համապատասխանում է իրավական որոշակիության չափանիշին: Մասնավորապես, «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն» հատկանիշը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք հոդվածներով (131-րդ, 132-րդ, 175-րդ և այլն) և մեկնաբանված է ինչպես քրեական իրավունքի գիտության մեջ, այնպես էլ՝ ՀՀ նախադեպային իրավունքում (ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի որոշումը ԵԷԴ/0091/01/11 գործի վերաբերյալ): «Հրապարակային կոչեր» հատկանիշը ևս մի շարք հանցագործությունների հատկանիշ է (301-րդ և 385-րդ հոդվածներ), այն մեկնաբանված է ՀՀ Սահմանադրական դատարանի 14.10.2008 ՍԴՈ-766 որոշման մեջ:

Բռնության կոչեր ասելով քրեականացվող արարքի իմաստով պետք է հասկանալ անձանց անորոշ շրջանակի գիտակցության և կամքի վրա այնպիսի հոգեբանական ներգործություն, որը նպատակ է հետապնդում հակելու նրանց անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության գործադրմանը:

Հանցակազմի առկայության համար էական է լինելու, որ բռնության կոչերը **հրապարակային** բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց հակելով բռնության գործադրման:

Կոչերի հրապարակային լինելու մասին հարցը պետք է լուծել հաշվի առնելով կոչեր անելու վայրը, իրադրությունը և գործի այլ հանգամանքները: Բռնության կոչերը կարող են արտահայտվել տարբեր կերպ՝ գրավոր կամ բանավոր ձևով, տեխնիկական միջոցների, զանգվածային հաղորդակցության միջոցների, ընդհանուր օգտագործման տեղեկատվական-հաղորդակցական ցանցերի, այդ թվում՝ ինտերնետի օգտագործմամբ: Բռնության կոչերը կարող են արվել հասարակական նշանակության վայրերում մարդկանց դիմելով, հավաքների ժամանակ դրանց մասնակիցներին դիմելով, թռուցիկներ բաժանելով, պաստառներ փակցնելով, ինտերնետային կայքերում, սոցիալական ցանցերում, բլոգներում, ֆորումներում գրառումներ կատարելով և այլն:

Այլ կերպ ասած՝ կոչերի հրապարակային բնույթը նշանակում է, որ բանավոր արտահայտվելու դեպքում դրանք արվում են երրորդ անձանց ներկայությամբ, իսկ գրավոր, գրաֆիկական կամ տեսաձայնային եղանակով արտահայտվելու դեպքում դրանք արվում են այն հաշվարկով, որ երրորդ անձինք հետագայում կձանոթանան դրանց բովանդակությանը:

Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը տարբերվում են անձի դեմ ուղղված կոնկրետ հանցագործության դրոշխությունից նրանով, որ դրոշխությունը միշտ հասցեագրված է կոնկրետ անձին կամ անձանց, իսկ հրապարակային կոչերը՝ անձանց անորոշ շրջանակին:

Բռնության կոչեր չեն կարող համարվել այնպիսի դատողությունները, որոնք իրենց բովանդակային ուղղվածության կամ անորոշության պատճառով չեն կարող հոգեբանական ազդեցություն ունենալ մարդկանց կամքի և գիտակցության վրա և վերջիններիս մոտ ձևավորել բռնություն գործադրելու շարժառիթ:

Հանցանքը ավարտված է համարվելու հրապարակային կոչերը անելու պահից՝ անկապ նրանից, թե արյդոք երրորդ անձինք այդ կոչերի հիման վրա գործադրեցին բռնություն թե ոչ:

Արարքը որակելիս հնարավոր դժվարություններից խուսափելու և քրեաիրավական նորմերի արհեստական մրցակցությունը բացառելու նպատակով առաջարկվող դիսպոզիցիան ձևակերպված է որպես վկայակոչող: Արարքը որպես բռնության հրապարակային կոչեր որակելու համար անհրաժեշտ է լինելու բացառել արարքում քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի չորրորդ մասով, 226-րդ, 301-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

### **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է վերանցել ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում առկա ավելորդ նշումը հանրորեն վտանգավոր հետևանքի՝ մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին պատճառվող վնասի մասին:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է նաև անձի կամ անձանց խմբի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար քրեական պատասխանատվություն սահմանելու միջոցով կանխարգելել նմանատիպ արարքների կատարումը, հասարակության անդամների մոտ ամրապնդել այն համոզմունքը, որ բռնությունը չի կարող դիտարկվել որպես սեփական պահանջմունքների բավարարման և առկա խնդիրների լուծման ընդունելի միջոց, ինչպես նաև որպես արդյունք՝ ապահովել հասարակական անվտանգության առավել լիարժեք և ամբողջական քրեաիրավական պաշտպանվածությունը: